ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՀԱԿՈԲ ՄԱՆԱՆԴՅԱՆ
(Ծննդյան 100-ամյակի առթիվ)

Վ. Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

Հայագիտության աչքի ընկնող երախտավորներից էր ակադեմիկոս Հակոբ Համազասպի Մանանդյանը, որն իր ողջ կյանքը առանց մնացորդի նվիրեց գիտությանը։ Եվ հիմա ի մի բերելով նրա գիտական վաստակը, կարող ենք ասել՝ նա գիտությունը սիրում էր իր մեջ և ոչ թե գիտության մեջ՝ իրեն։ Հակոբ Մանանդյանը ծնվել է 1873 թ. նոյեմբերի 22-ին (հին տոմարով 10-ին)[1] Ախալցխա քաղաքում (Վրացական ՍՍՀ), անտառապետի ընտանիքում։ Հակոբի տասը տարին դեռ չբոլորած վախճանվեց հայրը։ Հակոբ Մանանդյանը 1883 թ. ընդունվում է Թբիլիսիի առաջին արական դասական գիմնազիան, որն ավարտում է 1893 թ.։ Նույն թվականի աշնանը նա մեկնում է Գերմանիա՝ բարձրագույն կրթություն ստանալու։ Հ. Մանանդյանը չորս տարի ուսանեց Ենայի, Լայպցիգի և Ստրասբուրգի համալսարաններում, մասնավորապես մասնագիտանալով լեզվաբանական տարբեր առարկաների ուղղությամբ։ Այն ժամանակ գերմանական համալսարաններում պատմա-համեմատական լեզվաբանության մեջ տիրապետում էր երիտքերականների (Junggrammatiker) դպրոցի տեսությունը, ըստ որի՝ հետազոտման հիմնական բնագավառներն էին հնչյունաբանությունը, ձևաբանությունը և ստուգաբանությունը, մասամբ նաև շարահյուսությունը։ Սրանց տեսական դրույթ-

---

[1] *Հ. Մանանդյանի ինքնակենսագրությունը պահվում է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային բաժնում (այսուհետև՝ ՄԱԲ), Հ. Մանանդյանի ֆոնդ, թ. 227, վ. 308, թերթ 1, 6, վ. 310, էջ 1։* Agop Manandian, Beiträge zur albanischen Geschichte, Leipzig, 1897 *(վերջին էջում)։*

ների վրա զգալի չափով ազդել է ականավոր ֆիզիոլոգ և փիլիսոփա Վիլհելմ Վունդտի պսիխոֆիզիոլոգիզմը, որի համաձայն լեզուների պատմությունը պետք է ուսումնասիրել տվյալ ժողովրդի հոգեբանության տեսանկյունից։ Ե-բրիտքերականների դպրոցի հիմնադիրներից ու ականավոր ներկայացուցիչ-ներից էին Ֆրիդրիխ Պաուլ Բրուգմանը, Ավգուստ Լեսկին, Էդուարդ Զիվերսը (երեքն էլ Լայպցիգում), Բերտոլդ Դելբրյուկը, Օտտո Շրադերը (երկուսն էլ Ենայում), Հայնրիխ Հյուբշմանը (Ստրասբուրգում), որոնք և Հ. Մանանդյա-նի ուսուցիչներն էին։ Պատմա-համեմատական լեզվաբանության առարկանե-րի ուսումնասիրության հետ Հ. Մանանդյանը կատարելագործում է իր իմա-գությունը հին աշխարհի մի շարք լեզուների բնագավառում կամ սովորում դրանք, ինչպես, օրինակ, եբրայեցերեն, սանսկրիտ, զենդերեն, հին պարսկե-րեն, ասորերեն, հունարեն և լատիներեն։ Այս նախապատրաստության շնոր-հիվ և, հավանաբար, հունարենի իր ուսուցիչներ Դելբրյուկի և Հիրցելի ազդե-ցությամբ նա հետագայում ձեռնամուխ եղավ հայ մատենագրության մեջ հայտնի հունաբան դպրոցի թարգմանությունների ուսումնասիրությանը[2]։

Հ. Մանանդյանը աշակերտեց նաև նշանավոր բյուզանդագետ, հայ միջ-նադարյան պատմության գիտակ Գելցերին (Հունաստանի և Հռոմի պատմու-թյան աղբյուրագիտություն), Վաքսմուտին (Հունաստանի պատմություն), Գյոցին (հունական և լատինական գրականություն), Շրայբերին (հելլենիզմի մշակույթ), Լինդներին (պարսկական դրականություն), Վինդիշին (սանսկրիտ գրականություն) և այլոց։ Հ. Մանանդյանը Ստրասբուրգում լսել է նաև ագրա-րային հարաբերությունների ականավոր հետազոտող և դրամագետ (Geldtheo-retiker) Գեորգ Ֆրիդրիխ Կնապին, որը դասախոսել է սոցիալիզմի մասին ա-ռարկան։ Միջնադարյան հայ հասարակության սոցիալ-տնտեսական հարա-բերությունների զարգացման պրոբլեմների նկատմամբ Հ. Մանանդյանի հե-տաքրքրությունը հավանաբար սաղմնավորվել է իր ուսուցչի դասախոսու-թյունների ներգործությամբ[3]։ 1897 թ. ամառը Հ. Մանանդյանը համալսա-րանն ավարտում է Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշ-խարհի» երկի քննությանը նվիրված դիսերտացիայի պաշտպանությամբ „Beiträge zur albanischen Geschichte„[4] և ստանում փիլիսոփայության դոկ-տորի գիտական աստիճան։ Աշխատությունը հրատարակվում է նույն թվակա-նին՝ Լայպցիգում։

1898 թ. գարնանը Հ. Մանանդյանը Պետերբուրգի համալսարանի արևել-յան լեզուների ֆակուլտետում էքստերն քննություն է հանձնում պարսից բա-նասիրության, լեզվի և պատմության գծով ու ստանում առաջին կարգի դիպ-լոմ[5]։

Հ. Մանանդյանը ստանալով լայն ու հիմնավոր կրթություն, տիրապետե-լով հին ու նոր մի քանի լեզուների՝ հին հունարեն, լատիներեն, հին պարսկե-

---

2 Աշոտ Հովհաննիսյան, Հուշեր և բնութագրումներ, Երևան, 1969, էջ 117։

3 ՄԱԲ, թ. 227։ 79բ վավերագիրը Հ. Մանանդյանի ուսանողական տարիների ծոցա-տետրն է, ուր նշված են իր կարդացած՝ Ֆ. Էնգելսի երկու աշխատությունները «Ursprung der Famile, des Privateigentums, des Staates" և „Herrn Eugen Dührings Umwalzung der Wissenschaft".

4 Դիսերտացիայի վերաբերյալ հավաքած նյութերը և ռուսերեն շարադրանքի տարբերակը տե՛ս ՄԱԲ, թ. 221, վ. 80։

5 ՄԱԲ, թ. 227, վ. 310։

րեն, սանսկրիտ, ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն, 1899 թ. վերջերին գալիս է Հայաստան և գիտական գործունեության ասպարեզ չգտնելով՝ զբաղվում ուսուցչությամբ։ 1900—1905 թթ. Հ. Մանանդյանը որպես ուսուցիչ պաշտոնավարել է Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում, ավանդելով հունարեն, գերմաներեն, հունաց գրականություն, հունաց փիլիսոփայության պատմություն և անգլիական գրականություն[6]։ Այս տարիներին նա զբաղվել է գիտական աշխատանքով՝ ուսումնասիրել Էջմիածնի մատենադարանի իմաստասիրական և պատմական բազմաթիվ ձեռագրեր[7]։

1905 թ. ամռանը Հ. Մանանդյանը տեղափոխվում է Թբիլիսի և մինչև 1907 թ. ամառը ժամավճարով պաշտոնավարում առաջին և երկրորդ արական դիմնազիաներում, որպես հայերենի, գերմաներենի և հայ գրականության ուսուցիչ։ Այստեղ նա աշխատակցում է «Արշալույս» օրաթերթին, իսկ 1906 թ. մարտի 7-ից դառնում նրա ժամանակավոր խմբագիրը։

Այս թերթում Հ. Մանանդյանը տպագրում է մի շարք հոդվածներ, օրինակ՝ «Որն է լավագույն դպրոցը» (1905 թ. սեպտեմբերի 15, 17, №№ 13, 15), հայերի կոտորածի տասնամյակին է նվիրված «Քարերն են բողոքում» հոդվածը (1906 թ. հունվարի 25, № 17), արևմտահայերի ռուսական կողմնորոշման մասին է խոսվում «Եվրոպական միջամտության խաբուսիկ հույսը» (1906 թ. հունվարի 31, № 22) և «Եվրոպական քաղաքագետների կարծիքը» (1906 թ. փետրվարի 12, № 32) հոդվածներում։ 1905—1907 թթ. բուրժուադեմոկրատական հեղափոխության առիթով թերթում տպագրվեց ազգային հարցի (1906 թ. փետրվարի 23, № 40, մարտի 11, № 54), դումայական ընտրությունների (1906 թ. հունվարի 1, № 1, մարտի 4, № 48, մարտի 16, № 58) վերաբերյալ Մանանդյանի հոդվածները։

Նյութականը Հ. Մանանդյանին ստիպում է իրավարան դառնալ։ Նա 1908—1909 ուստարում Յուրևի (Դորպատ) համալսարանի իրավաբանական ֆակուլտետում դարձյալ էքստերն հանձնում է քննություն և ստանում երդվյալ հավատարմատարի կոչման առաջին կարգի դիպլոմ[1]։ 1909 թ. ամառվանից Հ. Մանանդյանը տեղափոխվում է Բաքու և զբաղվում փաստաբանությամբ։

1911 թ. գարնանը Հ. Մանանդյանի թեկնածությունը առաջ է քաշվում Մոսկվայի Լազարյան ճեմարանի տեսչի թափուր տեղը զբաղեցնելու համար, սակայն նույն տեղի մեկ այլ հավակնորդ զրպարտում է նրան՝ մեղադրելով դաշնակցության մեջ[9]։ Հ. Մանանդյանը 1911 թ. օգոստոսի 13-ին Պ. Վ. Գի-

---

6 ՄԱԲ-ում պահվում է «Անգլիական գրականության պատմություն» աշխատությունը (թ. 221, վ. 8), որից Շեքսպիրի վերաբերյալ հատվածը հրատարակեց Մ. Նարյանը («Բանբեր Հայաստանի արխիվների», 1972, № 3, էջ 117—128)։

7 Այս շրջանում նա Հ. Աճառյանի հետ իրականացնում է «Հայոց նոր վկաները» աշխատության ժողովրդական (Վաղարշապատ, 1902) և գիտական (Վաղարշապատ, 1903) հրատարակությունները։ Բանասիրական հմտալից ուսումնասիրություն է գրում Դավիթ Անհաղթի և հունաբան դպրոցի մատենագրական առանձին հուշարձանների մասին և հրատարակում մի շարք բնագրեր, օրինակ, Nonnos, Die Scholien zu fünf Reden des Gregor von Nazianz", Marburg, 1903, «Դավիթ Անհաղթի խնդիրը նոր լուսաբանությամբ», Վաղարշապատ, 1904, «Քաղվածքներ Եւսեբիոս Կեսարացու Քրոնիկոնից մի հին ձեռագրում» («Հանդէս ամսօրեայ», 1905, № 1, էջ 15—19)։

8 ՄԱԲ, թ. 227, վ. 308, էջ 7։

9 ՄԱԲ, թ. 227, վ. 318դ, էջ 7։

գուլիանովին գրած նամակում ժխտում է այդ մեղադրանքը[10]։ Այնուհետև նա դարձյալ մնում է Բաքվում և շարունակում փաստաբանական իր աշխատանքը և միաժամանակ դասախոսում Բաքվի առևտրական դպրոցում, մինչև 1919 թ. վերջերը[11]։ Բաքվում նրա գործունեության մասին առայժմ տեղեկություններ քիչ ունենք։ Սակայն հայտնի է, որ 1917 թ. սեպտեմբերի 29-ից մինչև հոկտեմբերի 9-ը Թրիլիսիում գումարված հայոց ազգային խորհրդաժողովի նիստերում արևելահայերի կյանքին վերաբերող հարցերի քննարկման ժամանակ անկուսակցական խմբի ներկայացուցիչների անունից հանդես է եկել Հ. Մանանդյանը և հրապարակել մի գրավոր հայտարարություն, ուր նշվում է «խորհրդակցության զբաղմունքների սխալ ընթացքը» և կոչ է արվում անմիջապես անցնել շինարար գործունեության։ Հայտարարության տակ ստորագրել էին Հ. Մանանդյանը, Անդրանիկը, Լեոն և ուրիշներ[12]։

1920 թ. սկզբներին Հ. Մանանդյանը տեղափոխվում է Հայաստան՝ աշխատելու Ալեքսանդրապոլում կազմակերպվող համալսարանում[13]։ Սակայն այդ համալսարանը սոսկ կազմավորման շրջան ապրեց։

1921 թ. հունվարի 7-ին Հ. Մանանդյանը ընտրվում է Երևանի համալսարանի ռեկտոր։ Համալսարանի արևելագիտական ֆակուլտետում նա «Հայ ժողովրդի պատմություն» առարկայից դասախոսություններ է կարդում մինչև 1931 թ.։ 1921 թ. հոկտեմբերից մինչև 1923 թ. հոկտեմբեր Հ. Մանանդյանը համալսարանում վարում է արևելագիտական ֆակուլտետի դեկանի պաշտոնը։ Այնուհետև մնում է հայ ժողովրդի պատմության ամբիոնում որպես դասախոս, ուր նրան 1926 թ. շնորհվում է պրոֆեսորի, իսկ 1935 թ.՝ ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում։

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո, դասախոսական աշխատանքին զուգընթաց, սկսվում է Հ. Մանանդյանի գիտական գործունեության ամենաբեղմնավոր շրջանը։ Նա լայնացնում է գիտական իր հետաքրքրությունների ոլորտը և զբաղվում նաև հայ ժողովրդի քաղաքական ու սոցիալ-տնտեսական պատմության, հայագիտության մի շարք օժանդակ ճյուղերի՝ պատմական աշխարհագրության, չափագիտության, վիմագրության և այլ հարցերով։

Նկատի ունենալով Հ. Մանանդյանի գիտական վաստակը, 1938 թ. առանց հրապարակային պաշտպանության նրան շնորհվում է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան։ 1939 թ. նա ընտրվում է ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, իսկ երբ 1943 թ. կազմակերպվում է ՀՍՍՀ գիտությունների ակադեմիան, նա հաստատվում է ակադեմիկոսների առաջին կազմում։

Սովետական կառավարությունը բարձր է գնահատել Հ. Մանանդյանի գիտական և մանկավարժական գործունեությունը. նա պարգևատրվել է շքանը-

10 ՄԱՐ, թ. 227, վ. 319բ։

11 Բաքվում Հ. Մանանդյանը աշխատակցում է «Գործ» ամսաթերթին և «Баку» թերթին։ 1911 թ. Պետերբուրգում տպագրվեց նրա նախօրոք պատրաստած «Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտելի, ընծայեալ էլիասի իմաստասերի» աշխատությունը։

12 ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 5, թերթ 26։ Այս փաստաթուղթը շնորհակալությամբ ստացանք արխիվիստ Գրիգոր Հարությունյանից։ Ավելի ուշ՝ 1919 թ. հուլիսի սկզբներին Հ. Մանանդյանը մի պատգամավորության հետ Բաքվից ժամանում է Երևան՝ Ղարաբաղի հարցով (ՄԱՐ, թ. 228, վ. 366)։ Պատգամավորության զեկուցագիրը տե՛ս ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 25, թ. 9—15։

13 ՄԱՐ, թ. 227, վ. 316, կշ 3։

ջանով, մեդալներով և ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության պատվոգրով։

Հ. Մանանդյանը մահացավ 1952 թ. փետրվարի 4-ին, 79 տարեկան հասակում։

1911 թ. գարնանը Պ. Վ. Գիդուլիանովին հղած նամակում Հ. Մանանդյանն իր մասնագիտական կրթության ու պատրաստության մասին գրում է. «Երկար տարիների ընթացքում ես անդուլ պատրաստվեցի գիտական գործունեության։ Այդ նպատակով ես Գերմանիայում աշխատեցի լավագույն բանասերների մոտ, սովորեցի բոլոր նորագույն լեզուները, որպեսզի հնարավորություն ունենամ օգտվել արևմտաեվրոպական գիտնականների աշխատություններից»[14]։ Սակայն այն ժամանակվա պայմանները Հ. Մանանդյանին հնարավորություն չտվեցին իրականացնել իր իղձը։ Հենց սկզբից նա գիտական ասպարեզ մտավ որպես բանասեր (ներառյալ աղբյուրագիտություն և բնագրագիտություն)։ Շուրջ քառորդ դար նա աշխատեց միայն այդ բնագավառում, իսկ հետագայում հայ ժողովրդի պատմության այլ պրոբլեմներով զբաղվելիս էլ նշված բնագավառը չթողեց։ Հունաբան դպրոցի ընդարձակ շղթայի առանձին օղակները ուսումնասիրելուց հետո Հ. Մանանդյանն այդ թեման ամբողջականացնում է կոթողական ուսումնասիրության մեջ և հրապարակում «Հանդէս ամսօրեայի» 1925—1928 թթ. համարներում՝ «Հունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները» խորագրով, որն առանձին լույս տեսավ 1928 թ. Վիեննայում։ Դա դասական բանասիրության եզակի օրինակ է և մեծ ներդրում հայագիտության մեջ[15]։

Հ. Մանանդյանի հետաքրքրությունը՝ լծորդված հունաբան դպրոցի թարգմանությունների հետ, ընթացավ Մովսես Խորենացու ժամանակի ճշտման ուղղությամբ։ Այս հարցի ուսումնասիրությանը նա նվիրել է մի քանի հետազոտություններ[16] և պատմահոր նախորդ քննադատների նման վերջինիս համարել IX դ. հեղինակ։ Հակառակ այս վրիպմանը, Հ. Մանանդյանը շատ բարձր էր գնահատում Մ. Խորենացու պատմությունը։ Նա «Начальная история Армении... Мар Абаса»[17] հոդվածում մերժեց այն թյուր կարծիքը, թե, իբր, Մար Աբաս Կատինայի աշխատությունը, որն օգտագործել է Խորենացին, միտումնավոր կերպով հորինվել է վերջինիս կողմից։ Հ. Մանանդյանն ապացուցեց, որ Մար Աբաս Կատինան մտացածին չէ, այլ IV դ. հեղինակ է և գրել է «Հայոց նախնական պատմությունը» աշխատությունը, որից օգտվել է ոչ միայն Խորենացին, այլև Սեբեոսը և Պրոկոպիոս Կեսարացին։

Հ. Մանանդյանի բանասիրական աշխատանքները, բացառությամբ Խորենացու ժամանակին նվիրված ուսումնասիրությունների, խոշոր ներդրում են

---

14 ՄԱԲ, թ. 227, վ. 319գ, նաև վ. 319ա, 319դ։

15 Հետագայում էլ հրապարակվեց հունաբան դպրոցին պատկանող երկու բնագիր ևս. «Թեովնայ յաղագս ճարտասանական կրթութեանց», Երևան, 1938, «Հերմեայ եռամեծի առ Ասկղեպիոս Սահմանք» («Բանբեր Մատենադարանի», № 3, Երևան, 1958, էջ 287—313)։

16 Հ. Մանանդյան, Խորենացու առեղծվածի լուծումը, Երևան, 1934, նույնի՝ «Когда и кем была составлена «Армянская география», приписываемая Моисею Хоренскому» («Византийский временник», т. I (26), М., 1947, стр. 127—143). «Նոր դիտողություններ Խորենացու պատմության բառապաշարի մասին» («Էջմիածին», 1955, № 5, էջ 29—35, № 6, էջ 20—26)։

17 «Палестинский сборник», вып. 2 (64—65), М.—Л., 1956, стр. 69—86.

հայագիտության մեջ և ունեն անբեկանելի արժեք։ Բայց ինչքան էլ նշանակալից ու խոշոր լինեն այս բնույթի ուսումնասիրությունները, այդուհանդերձ, ավելի քան մեծ արժեք ունեն հայ ժողովրդի քաղաքական, սոցիալ-տնտեսական պատմության և դրանց օժանդակ ճյուղերին նվիրված նրա հետազոտությունները։

Գիտության ճանապարհին տակավին նոր ոտք դրած Հ. Մանանդյանը 1902 թ. «Արարատ» հանդեսում հրապարակում է ծրագրային մի հոդված[18], որը ցույց է տալիս հեղինակի ոչ միայն պատմագիտական ճիշտ ըմբռնումը, այլև նախանշում նրա գիտական հետագա գործունեության հավատամքը։ Հոդվածը վերջանում է մարքսիզմին մոտ հետևյալ արտահայտությամբ. „Das Sein soll des Bewusstsein bestimmen— իրականությունը պետք է լինի գիտակցության որոշողը» (էջ 171)։ Այդ ելակետը Հ. Մանանդյանը կարողացավ իրականացնել միայն Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո[19]։ 1920-ական թվականների սկզբից Հ. Մանանդյանը ձեռնամուխ է լինում նախարարական Հայաստանի արտադրող դասակարգի՝ շինականների պրոբլեմի հետազոտությանը[20], որտեղ քննվում են հայոց ներքին կյանքին վերաբերող հարցեր։ Հաջորդ ուսումնասիրությունը նվիրված էր մարզպանության շրջանի արքունի հարկերին[21]։ Այնուհետև երկու տարում երկու պրակով լույս տեսան «Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության», իսկ 1932 թ. Թբիլիսիում՝ «Заметки о феоде и феодальном войске Парфии и Аршакидской Армении» ուսումնասիրությունները։ Այս աշխատանքներում խոր ուսումնասիրությամբ վեր են հանված գյուղացիության սոցիալ-տնտեսական և իրավական վիճակը, գյուղական համայնքի հողաբաժանման ձևը, հարկերի առանձին տեսակները, դրանց էությունը և չափերը։ Խորացնելով հետազոտությունը միջնադարյան չափ ու կշիռների վերաբերյալ, նա հաջողությամբ կատարեց այդ խնդիրը և հրատարակեց «Կշիռները և չափերը հնագույն հայ աղբյուրներում» աշխատությունը (Երևան, 1930) և «Средневековый итинерарий в армянской рукописи X столетия» հոդվածը[22]։ Հ. Մանանդյանը հատուկ ուսումնասիրության արժանացրեց միջնադարյան հայ հեղինակների տեղեկությունները երկարության չափերի մասին և գրեց «Էրաստոսթենեսի ստադիոնը և պարսից ասպարեզը»[23], «О градусных измерениях меридиана и земной поверхности по древнеармянским источникам» (Ереван, 1934) աշխատությունները, որոնցում արծարծված հարցերը դուրս են գալիս հայագիտության շրջանակներից։

Հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքի ուսումնասիրությանն են նվիրված առևտրի և քաղաքների մասին գրած նրա հետազոտությունները[24],

18 «Մի դիտողություն հայոց ներքին կյանքի ուսումնասիրության վրա»։

19 ՄԱԲ, թղթ. 227, վ. 308, թ. 2։

20 Հ. Մանանդյան, Դիտողություններ հին Հայաստանի շինականների դրության մասին մարզպանության շրջանում, Երևան, 1925։

21 Հ. Մանանդյան, Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում, Երևան, 1926։

22 «АН СССР академику Н. Я. Марру», М.—Л., 1935, стр. 723—728.

23 «Вестник древней истории», 1950, № 2, стр. 202—219.

24 Я. А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1930 (երկրորդ լրացված հրատարակությունը՝ 1954 թ.), Հ. Մանանդյան, Հայաստանի քաղաքները X—XI դարերում, Երևան, 1940։

որոնք հիմք դրեցին Հայաստանի ներքին ու արտաքին առևտրի, քաղաքների կառուցվածքի և այլ հարակից հարցերի դիտական ուսումնասիրությանը և մեծ արժեք են ներկայացնում, թեև քաղաքների առաջացման և զարգացման հարցում հեղինակը գերագնահատեց տարանցիկ առևտրի դերը։

Հ. Մանանդյանը մեծ հետաքրքրությամբ ձեռնամուխ եղավ նաև պատմական աշխարհագրության ուսումնասիրմանը, հիմք ունենալով IV դ. կազմված «Պեֆտինգերյան քարտեզի» Հայաստանին վերաբերող հատվածը։ Այս պրոբլեմին վերաբերող առաջին երկու աշխատությունները՝ «Հայաստանի հին ճանապարհները Artaxata-Satala և Artaxata-Tygranakerta ըստ Պեֆտինգերյան քարտեզի»[25] և «Պեֆտինգերյան քարտեզի Hariza կայարանը»[26] հրատարակվեցին 1931—1932 թթ.։ 1936 թ., որպես ընդհանրացնող աշխատություն, նա հրատարակեց «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պեֆտինգերյան քարտեզի» մեծարժեք ուսումնասիրությունը, որտեղ ճշտված են աղավաղված մի շարք տեղանուններ, տեղադրված են Արտաշատից դեպի Սատաղ, Տիգրանակերտ, Սեբաստապոլիս, Համադան ձգվող ճանապարհների ուղղությունը և հեռավորության չափերը։ Գրքի հավելվածում ճշտված է նաև Դվին-Պարտավ ճանապարհի ուղղությունը։ Հետագա տարիներում Հ. Մանանդյանը մանր, բայց արժեքավոր հետազոտություններ է կատարում Հայաստանի, Անդրկովկասի պատմական աշխարհագրության և առևտրական ճանապարհների վերաբերյալ[27]։ Այդ հետազոտություններում պատմա-բանասիրական խոր վերլուծություններով որոշված են Պոմպեոսի արշավանքի և Միհրդատի նահանջի ճանապարհները, մ.թ.ա. VIII դ. կիմերների արշավանքի ուղղությունը Անդրկովկասում, նահանջող 10.000 հույների և սարմատական ցեղերի արշավանքների ճանապարհները Հայաստանում, սինդերի երկրի, Արմինիա, Զարասպ լեռան, Զինթա ամրոցի, Նոր Շիրականի, Հայասա-Ուրարտուի տեղադրումները և այլն։

Հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական զարգացման պատմության հարցերին նվիրված փոքրածավալ աշխատություններից հետո Հ. Մանանդյանը տալիս է այդ պրոբլեմի ամբողջական, դասական իր ուսումնասիրությունը[28]։ Այստեղ հեղինակը փաստական հարուստ նյութի հիման վրա քննում է նախարարական կազմակերպության ներքին բովանդակությունը և էական առանձնահատկությունները, նրա նվիրապետական բնույթը, ֆեոդալական տիրույթների ներքին կառուցվածքը, հողատիրության ձևերը, դասերի իրավական վիճակը, ստրուկների գոյության փաստը և այլ բազմաթիվ հարցեր։

Մինչև 1920 թ. Հ. Մանանդյանը չի զբաղվել հայ ժողովրդի քաղաքական պատմության հարցերի ուսումնասիրությամբ։ Այս մարզում նրա առաջին

---

25 «Տեղեկագիր գիտության և արվեստի ինստիտուտի», 1931, № 5, էջ 65—89։

26 «Մանր հետազոտություններ», Երևան, 1932։

27 Я. А. Манандян, Круговой путь Помпея в Закавказье («Вестник древней истории», 1939, № 4, стр. 70—82), Я. А. Манандян, Маршруты понтийского похода Помпея и путь отступления Миритада в Колхиду. (Նույն տեղում, 1940, № 3—4, էջ 89—100), Հ. Մանանդյան, Հին Հայաստանի և Անդրկովկասի պատմության մի քանի պրոբլեմների մասին, Երևան, 1944, Հ. Մանանդյան, Պատմա-աշխարհագրական մանր հետազոտություններ, Երևան, 1945։

28 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում (Արշակունիների ու մարզպանության շրջան), Երևան, 1934։

գործը եղավ Երևանի ժողովրդական համալսարանում կարդացած դասախոսությունների հրատարակումը[29]։ 1940 թ. նա հրատարակեց խիստ ուշագրավ և ժամանակի միջազգային պատմության լայն պաստառի վրա կառուցված մի կապիտալ հետազոտություն՝ նվիրված Տիգրան Մեծին[30]։ Արևմտաեվրոպական պատմաբաններ Թ. Մոմզենը, Թ. Ռեյնաքը, Գ. Ֆեռեռոն հիմք ընդունելով հռոմեական պատմիչների՝ Պլուտարքոսի, Տիտոս Լիվիոսի և այլոց կեղծ, միտումնավոր տեղեկություններն ու անտեսելով վոքրասիական չեզոք հեղինակներ Մենոնի, Ֆլեգոնի, Նիկոլայ Դամասկացու և այլոց օբյեկտիվ վկայությունները, անբարյացակամ վերաբերմունք դրսևորեցին դեպի Արևելքի ժողովուրդները, Տիգրանին դիտելով որպես աննշան անձնավորություն և խաղալիք Միհրդատ Պոնտացու ձեռքին։ Հ. Մանանդյանը համադրելով բազմաթիվ աղբյուրների տվյալներ, մեծ վարպետությամբ վերականգնեց Տիգրանի և այն ժամանակվա հայ հասարակության իրական նկարագիրը։ Նա, ինչպես նշել է ակադեմիկոս Բ. Դ. Գրեկովը, ցույց տվեց, որ ստրկատիրական Հռոմը Արևելքում չներմանեց եվրոպական քաղաքակրթություն, այլ կործանեց Հայաստանի հելլենիստական մշակույթը և ոչնչացրեց տնտեսական ու մշակութային հետագա զարգացման նախադրյալները[31]։

1939 թ. աշնանը, երբ նշվում էր «Սասունցի Դավիթ» էպոսի ստեղծման 1000-ամյակը, Հ. Մանանդյանը գրեց «Ժողովրդական ապստամբությունները Հայաստանում արաբական տիրապետության դեմ» ուսումնասիրությունը, իսկ Մեսրոպ Մաշտոցի մահվան 1500-ամյակի առթիվ՝ մի այլ արժեքավոր հետազոտություն[32], ուր քննված են Հայաստանի IV դ. վերջի, V դ. սկզբի քաղաքական կացությունը, Մեսրոպ Մաշտոցի կենսագրությունը և լուսավորական գործունեությունը, նախամեսրոպյան գրերի ու գրականության, հայերեն գրերի գյուտի ժամանակի, պատմական նշանակության հարցերը։ Հ. Մանանդյանը կյանքի վերջին տարիներին զբաղվեց Արմավիրում և Գառնիում գտնված հունարեն արձանագրությունների վերծանմամբ[33]։

Հայ ժողովրդի քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային պատմության ընդհանուր շրջայի բազմաթիվ օղակները տարիների ընթացքում ուսումնասիրելով և հրապարակ հանելով, ակադեմիկոս Հ. Մանանդյանը Հայրենական մեծ պատերազմի ծանր օրերին ձեռնամուխ եղավ ամբողջական և ընդհանրացնող մեծ գործի ստեղծմանը՝ «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» խորագրով։ Այդ գործը բաղկացած պետք է լիներ մի քանի հատորներից և պիտի ընդգրկեր հայ ժողովրդի պատմությունը սկզբից

---

29 Հ. Մանանդյան, Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքների շրջանում, Երևան, 1922 (ապակետիպ)։

30 «Տիգրան Բ և Հռոմը»։ Նույնը ռուսերեն (Երևան, 1943) և ֆրանսերեն (Լիսաբոն, 1963)։

31 Б. Д. Греков, Выдающийся советский историк (А. Арзуманян, Дружба, II, Ереван, 1960, стр. 278).

32 Я. Манандян, Месроп Маштоц и борьба армянского народа за культурную самобытность, Ереван, 1941.

33 Հ. Հ. Մանանդյան, Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ, Երևան, 1946, Հ. Հ. Մանանդյան, Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, Երևան, 1946։ Я. Манандян, Новые заметки о греческой надписи на языческом храме Гарни (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1951, № 4, էջ 9—35)։

մինչև XV դ. ներառյալ։ Առաջին հատորը, որը լույս տեսավ 1945 թ., ընդգրկում է հայ ժողովրդի կազմավորումից մինչև Արշակունիների հաստատումը (66 թ.) ընկած ժամանակաշրջանը։ Երկրորդ հատորի առաջին մասը լույս տեսավ 1956 թ. և ընդգրկում է Հայաստանի պատմությունը Արշակունիների հաստատումից մինչև նրանց անկումը (428 թ.)։ Երրորդ հատորը հրապարակվեց 1952 թ. և ընդգրկում է XI—XV դ. սկիզբը։ Երկրորդ հատորի երկրորդ մասը, որն ընդգրկելու էր մարզպանության շրջանը, արաբների տիրապետությունը, Բագրատունիների դինաստիայի հաստատումը և անկումը՝ չգրվեց։

Համառոտակի այսպիսին է ակադեմիկոս Հ. Մանանդյանի գիտական վաստակը, որն իր ուրույն տեղն է գրավում հայագիտության մեջ։ Նրա գիտական վաստակն ունի ոչ միայն պատմագիտական և ճանաչողական անգնահատելի արժեք, այլև օրինակ է հանդիսանում այն բանի, թե ինչպիսի պատրաստությամբ և նվիրվածությամբ պետք է աշխատել մեր ժողովրդի պատմության և բանասիրության մութ ծալքերը լուսավորելու գործում։

АКАДЕМИК ЯКОВ МАНАНДЯН

(К 100-летию со дня рождения)

В. А. АКОПЯН

Доктор исторических наук

Резюме

Академик Я. А. Манаидян получил историко-филологическое, лингвистическое, востоковедческое и юридическое образование в Йене, Лейпциге и Юрьеве. Он занимался педагогической деятельностью в Эчмиадзине, Тбилиси и Баку.

Академик Я. А. Манандян — крупный арменовед. Многие его труды посвящены вопросам армянской филологии, истории, исторической географии, социально-экономических отношений, метрологии, эпиграфики и текстологии.